

յօրէնէ ելեքտրականութիւնն որ մատնեց իւր վարպետ արհեստն : Բաժնի մը մէջ որ մանր մունր գողութիւններ կը պատահէին ժամանակէ մը ի վեր՝ ցուցունելեաց ի պաշտպանութիւն՝ ելեքտրական թակարդ մը ներմուծուած էր : Ժերուկն ըստ սովորութեան կրկին կը մօտենայ ցուցանելեաց եւ կը ջանայ կրկին ընտրել իւր զոգօնն, երբ կը բռնուի թակարդէն, որ եւ զանգակի հնչմամբ մը կը ծանուցանէ ոստիկանական կայարանի մը մէջ՝ անկող հիւրին այցելութիւնն : Եւ ահա ոստիկանք կը դիմեն ըստ ուղղութեան զանգակին՝ ճիշդ յայն վայր, ուր ժերուկն կը ճգնէր արդէն ճողոպրել գինքն կապող թակարդէն, եւ կը տանին զնա ուր չէր ուզեր : Հասարակ են այժմ մեծ վաճառատներու պատուհաններու մէջ այսպիսի գողարգելներ, որք առ երեւոյթս պատուհանի զարդերու կը նմանին, բայց ի ներքուստ թակարդներ են, եւ կը ծանուցանեն ճշտիւ իրենց մատչողներու անարբար նպատակներն, եւ ահա ոստիկանք ի դէպ ժամանակի կու գան ընդմիջել գողին պայծառ երազներն օրինաց եւ արդարութեան ձեռք : Այս գործեաց փոքրագոյն տեսակներն կը գործածուին ընդդէմ կասկածառներու : Կը դրուին վերարկուներու մէջ եւ ահա անզգոյշ գողն կը մատնէ ինքզինքն յանգէտոս ուր շոինչ մը արձակել տալով : Կան ելեքտրական լուսաշափեր, գիճաշափեր, եւ այլ նման ամենանորը գործիք : Ասոնք ամէնքն ալ վերջին ամաց յաջողակ գիտեր են :

Կ. Մ. Մանավեան

Շարայաբեշի

Դ Ե Ղ Ձ Ա Ն Ի Կ

(Տես յ'էջ 492)

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՂՁԱՆԻԿ. — Մնացած մասն ալ մարդս ամբողջացուցեր է : Եւրոպայի ամէն ազգ ուզած է իրեն ազգային զեղձանիկն ունենալ : Բեռլինացիք՝ Փրանդորիական դպրոցի հին արուեստական աւանդութեանց հաւատարիմ մնալով՝ թռչնաց այնպիսի զարմանալի սերունդ մը ստեղծեր են, որոնք իրենց վայելելու և տոկուն կերպարանքով և միանգամայն նարնջագոյն պայծառութեամբ նշանաւոր եղած են : Գաղղիա՝ ջանալով փայլուն գոյներ ստանալ՝ յառաջ բերեր է սպիտակ զեղձանիկները, որոնք օտար ազգաց մէջ բաւական յարգի են : Տիրուի և Հարցի թռչնաբոյծքն ջանացած են միայն քաջ երգիչ հասցնել : Ասոնք ամէն տարի Լոնդրայի վաճառանոցները այնպիսի թռչուններ կ'ուղարկեն, որոնց երաժշտական կրթութիւնն ամենակատարեալ է : Տեղեակ մէկն առաջին անգամ տեսնելուն, և ոչ քառասուն դանկ կու տայ այս գերմանական զեղձա-

նեկաց միոյն, որոնց տեղն սուլորական է և փետուրներն աննշան. սակայն երբ թռչունն երգէ, այն միայն բաւական է որ խնկոյն դիօղեվաճառի (marchand de gin) մը քսանեւհինգ ֆրանգի ծախուի :

Երաժշտ պեղձանիկ մը կրնայ ուղելից ըմպելիք վաճառող մը հարստացրնել : Թռչնայն երկար երգն խմողները հաշուեսեղանին շուրջը կը ժողվէ, և կը հրաւիրէ զիրենք ծարաւսին անցնելու : Այս փետրազարդ վերնաբամբ (ténor) երգիչքն այժմ վանդակաց մէջ հազարներով Տալիզի հզերաց վերայ կը բերուին : Պ. Ֆրանսիս Սմիթ կը վկայէ, թէ չորս Տիբուլցի թռչնարոյժք մի քանի տարուան մէջ հազար վեց հարիւրէն աւելի զեղձանիկ ծախսեր են յԱնգղիա :

Գերմանացիք երգչին միայն երաժշտական տաղանդը կը նկատեն, և անոր փետուրներուն բնաւ հոգ չեն տանիր : Խայտիտք, որոնք Գաղղիոյ և Անգղիոյ մէջ բնաւ յարգ չունին, ընդհակառակն՝ երբ արտաբայ կորդի ձիւք մ'ունենան՝ հարաւային Գերմանիոյ մի քանի զաւառաց մէջ բարձր գնով կը ծախուին : Պ. Սմիթ կը պատմէ, թէ որսորդին մէկը հռչակաւոր խայտիտ մը ոստղով բռնելու համար, հարիւր յիսուն քիլոմետր տեղ ըրեր է. դարձեալ ուրիշ գիւղացի մը կոլու մը փոխարէն խայտիտ մը տուեր է, որ վարժապետի շափ մետահարար Հարցի կրկնակ գեղգեղանքը կը հնչեցնէր :

Բաց ի դիօղեվաճառաց, որոնք վանդակի մէջ պահած վերնաբամբ երգիչ մը՝ իբր յաճախորդքը իրեն քաշող սուլակ մը կը նկատեն, Անգղիացիք ընդհանրապէս զեղձանեկաց երաժշտական տաղանդին ամենեւին կարեւորութիւն չեն տար : Մեր դրացեաց միակ նպատակն է, հանճարեղ խառնից միջոցաւ զունոց այնպիսի խառնուրդներ առաջ բերել, որոց արդիւնքն յայնմ է՝ որ անյաղթելի դժուարութեամբք միայն կարելի է ստանալ զանոնք : Լոնդրայի զեղձանիկի մը զուլսն և մարմինն պէտք է սաստիկ զեղին նարնջագոյն ըլլայ, իսկ թեւերն և ալուն բոլորովին սև : Մոխրագոյն կամ սպիտակ փետուր մը միայն կրնայ թռչնոյն արժէքին մեծ մասը կորսնցնել առաւ և Սիգէն համի տարեկան ցուցահանդիսի միտալէն զրկել զանիկայ :

Ելքսեն թէ, այս հրաշալիքս յառաջ կու գայ մողեզի վանազան կանաչ գոյնն ունեցող արուի մը զուգաւորութենէ՝ սեւսպիտակ գաղղիական զեղին էգի մը հետ. սակայն այս կազմակերպութեան՝ զաղտնիչն պահուած է, և այսչափ ինչ յայտնի է, թէ այսպիսի կատարեալ արգասիք խիստ սակաւ անգամ կը պատահին : Թռչնադարմանն օդոյ բարեխաւնութեան փոփոխութիւն չպատճառելու համար, թէ և ամենափոքր զգուշութիւններն անգամ ի գործ գնէ, և թռչնոյն փետուրները օդոյ հոսանքէն պաշտպանելու համար՝ վանդակին ներքին կողմը ապակիով պատէ, ոսկայն այնու հանդերձ զրեթէ միշտ արատ կամ բիծ մը կ'երևի, և հետեւաբար պէտք է փորձը նորէն սկսիլ :

Մի քանի նուազ խղճամիտ վաճառողք չեն վարանիր ուղղել բնութեան այս մանր քմահաճոյքը. ոմանք անգլիօրէն կը խելն գէշ կերպով զետեղեալ փետուրը, այլք նախամեծար կը համարին անոր ունենալիք զոյնը արուես-

տով աւալ. կան զարձեալ որոնք զժբազդ զեղձանեկին աւելի գողտրիկ, աւելի պայծառ և աւելի սաստիկ գոյն մը տալու նպատակաւ մեծ քանակութեամբ կ'այննայի պղպեղ կու տան :

ԹՕՍՈՂ, ԴԵՂՁԱՆԻԿ ՄԸ. — Մեր յայնկոյս Մանշի դրացիքն միայն գունոց բաղապրութիւններ ստանալով զո՛ր չեն ըլլար, որոց զազոսնիքը Եւրոպիոյ թռչնաւորմանք չեն ճանաչեր, և երբեմն կը պատահի որ կատարեալ հրաշք կը գործեն . Լոնդրայի մէջ երկու անգամ անգղիեան խօսող զեղձանիկը տեսնուեցան : Այս հրաշքիքներէ առաջինն 1838ին դրուած էր ի Regent Street, սակայն ռամկին վրայ այնչափ տպաւորութիւն չըրաւ այս բանս : Վիկտորիա թագուհոյն իշխանութեան առաջին տարիները Մեծին Բրիտանիոյ մէջ թռչնոց սէրն գեռ չէր սկսած : — Երկրորդն աւելի նոր ժամանակաց բան մ'է, որուն պատմութիւնն 1858 ին Լոնդրայի կենդանաբանական ընկերութեան ուղղեալ յիշատակարանի մը մէջ ընդարձակօրէն պատմուած է . Պ. Ռիքարդ Ալիի երկատիրութեան մէջ կը գտնուին այս հետաքրքիր յիշատակարանիս մի քանի հատուածներ :

Ամէնն ալ գիտեն թէ զեղձանիկը պերութեան մէջ բարբերինն ապակաւեւելով, իրենց ընտանեկան կարեօր պարտուց երբեմն անհոգ կ'ըլլան : Շատ անգամ էղն չուզեր թխսել, արուն ալ ձագերը կը մեռցնէ . երբեմն ալ կը պատահի, որ հայրն և մայրն՝ անդադար կոխներով իրարմէ զատուած՝ իրենց ձագը անօթութենէ մեռցնելու համար միայն կը միանան իրարու հետ :

Քիչ մնաց որ թիչի իւր ծնողաց անհոգութեան զո՛ր պիտի ըլլար . հազիւ թէ ծնաւ, հայրն և մայրն ուրիշ բոյն մը շինելու կ'աշխատէին, առանց հոգ տանելու իրենց ձագին վերայ, որ կերակուր ուզելու համար զուր տեղ կը տուցը լայն լայն կը բանար : Բարեգութ ձեռք մի վերուց փոքր թռչնիկը, Ֆլանելի մէջ պատեց զայն, կրակին քով մօտեցուց և անոր կտցին մէջ կեւակուր դրաւ :

Թիչի հակըթէ երնելէն վերջը՝ մարդկային ընկերութեան մէջ ապրելու համար թռչուններէն զատուելով՝ իւր նախորդաց լեզուն մոռցաւ, և իւր բարերարաց լեզուն սովորեց : Վաղ ժամանակէ կրցաւ ըսել . « Սիրելիդ և քաղցր թիչի, համբուրէ՛ զՄիննի, համբուրէ՛, համբուրէ՛ . . . » Յետոյ, God save the Queen երգի չորս առաջին չափերը սուլել սորվելով՝ կրթութեան ծայրը հասաւ :

Սկզբան կրնայինք տարակուսիլ և չհաւատալ, թէ թիչի կրցած ըլլայ որոշ կերպով արտասանել այնպիսի բառեր, որոնք կարծես փոքրիկ թռչնոյ մը կողորդէն անցնելու համար կազմուած չըլլան . սակայն մեր զարմանքն կը նուազի, երբ աչք մը տանք անգղիեան բնագոյն վերայ . « Dear sweet Titchie, kiss Minnie, kissie, kissie, kissie... : »

Երբ թիչի. առաջին անգամ այս պարբերութիւնը լսեց, կ'ըսեն թէ, անշուշտ անգղիեանը զեղձանեկաց լեզուին մէկ առանձին բարբառը կարծած պիտի ըլլայ :

Լաբադի—Լագրաս.